Հուսիկ Արա

Քայլերթ

Մեր ձեռքում է մեր դրոշը՝երեք գույն.
փշալար, ոստիկաններ ու շուրջկալ:
Աշխարհը ուղիղ է տեսնում,
մեր հայացքը շեղ նայեց.
և գնում են մեր ոտքերը անթեք՝
առավոտ, կեսօր ու իրիկուն:

Իմ թևերին՝ գարնան ապրիլ,
իմ աչքերում՝ այսվայրկյանի նորալույս,
թոքերիս մեջ եկող օրն է՝ շնչառություն.
իմ քայլն եմ անում
և սիրո անշեջ հուրն եմ բերում քեզ՝
կանաչ-կարմիր քո աշխարհը անթեղված:

Հեքիաթի այն տղան ես,
որ խոցեց սիրտը
և գլուխ առ գլուխ կտրում է
ջրի ակունքը փակած վիշապին:

Մենք անկախ ենք,
ազատ ենք,
միասին ենք,
Հայաստան: